Ց Ա Ն Կ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները՝ ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ հինգ կատեգորիաների՝

I ԿԱՏԵԳՈՐԻԱ	ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Այսպիսի օբյեկտների (շինարարական աշխատանքների) թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել
<u>կառուցապատողի կամ սեփականատիրոջ կողմից՝</u>
<u>առանց նախագծման և շինարարության թույլտվությունների</u>:

<u>Ծ Ա Ն Ո Թ Ռ Ի Թ Յ Ո Ի Ն</u>

❖ **I կատեգորիայի օբյեկտների** <u>ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման</u> աշխատանքների կազմակերպման համար կարող է կատարվել շենքերի և շինությունների ուսումնասիրություն, կազմվել թերությունների մասին ակտ, աշխատանքների ցանկ իսկ, անհրաժեշտության դեպքում նաև նախահաշիվ:

❖ **I կատեգորիայի օբյեկտների** համար, ստորև թվարկված այն աշխատանքները, որոնք նշված են աստղանիշով (*), ապա դրանց իրականացման համար անհրաժեշտ է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցնել համապատասխան էսքիզային նախագիծ,

❖ Ճարտարապետահատակագծային և (կամ) նախագծային առաջադրանքով ինտերիերի մշակման պայման նախատեսվելու դեպքում ներքին հարդարման աշխատանքները կառուցապատողները պետք է ներառեն գեղարվեստակոնստրուկտորական նախագծային փաստաթղթերի կազմում:

ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքներն ապահովում են շենքերի, շինությունների, ինժեներական սարքավորումների, ինչպես նաև դրանց առանձին մասերի պահպանումն ու շահագործման որակը և ներառում են վնասվածքների ու անսարքությունների վերացման կանխարգելիչ միջոցառումներ:

Շենքերում ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքներն են՝

1. հիմքեր՝

ա. նկուղային հարկերը շրջափակող արտաքին պարիսպների առանձին քարերի (աղյուսների) փոխում, փոխարինում,

բ. շենքերի նկուղների ներսից՝ հիմնապատերի առանձին թուլացած քարերի (աղյուսների) ամրացում,

գ. հավաքովի և միաձույլ բետոնե հիմնապատերի անհարթությթների և խոռոչների հարդարում,

դ. երեսապատում և հիմնապատերի նորոգում՝ նկուղային հարկերի ներսի կողմից (քարերի վերաշարում՝ ընդհանուր մակերեսի 2 տոկոսից ոչ ավելի),

ե. նկուղների ներսի կողմից հիմնապատերի սվաղում.

2. պատեր և սյուներ՝

ա. պոկված կամ թուլացած առանձին քարերի (աղյուսների) ամրացում և նորերի տեղադրում շաղախի միջոցով,

բ. քարե (աղյուսե) պատերի նեղ ճեղքերի շաղախալցում,

գ. երկաթբետոնե պատերի և սյուների ամրանների պաշտպանիչ շերտերի վերականգնում,

դ. խոշորաբլոկային և խոշորապանելային պատերի ուղղահայաց և հորիզոնական ծայրակցատեղերի մաքրում և շաղախապատում՝ օդահոսքերից ու խոնավությունից ներքին տարածքներն ու մետաղական ամրացումները մեկուսացնելու նպատակով,

ե. քարե ցոկոլների նորոգում,

զ. քարե (աղյուսե) և բետոնե սյուների անկյունների և պաշտպանիչ անկյունների տեղադրում,

է. կլոր կամ քառանիստ գերաններից ու տախտակներից կառուցված պատերի խծուծվածքների փոխում, ճեղքերի և արանքների փակում՝ կանեփաթելի խրձերով,

ը. փայտյա կոնստրուկցիաների մետաղական ձգանների փոխում կամ նորերի տեղադրում,

թ. պարիսպների առանձին հատվածների վերականգնում և վերանորոգում.

3. միջնորմներ և ներքին պատեր՝

ա. ներքին պատերի և միջնորմների ամրացում, սվաղում, երեսապատում (կերամիկական սալիկներ, պաստառներ և այլն) և ներկում (այդ թվում՝ դրանց նորոգում, փոխում, փոխարինում),

բ. բոլոր տեսակի միջնորմների կոնստրուկցիաների նորոգում, փոխում, փոխարինում,

գ. միջնորմների վերնամասերում և դրանց պատերի հետ միացման տեղերում նստվածքից առաջացած ճեղքերի փակում,

դ. միջնորմների ապակեպատված հատվածներում ապակիների փոխարինում.

4. կտուրներ և ծածկեր՝

ա. ծպեղագերանների ուժեղացում լրացուցիչ ամրակապերով,

բ. կտուրների փայտյա կոնստրուկցիաների ամրացում՝ կցանումների, ծայրակցվածների և այլ միացումների թուլացած տեղերում լրացուցիչ հեղույսների և երկաթակապերի տեղադրմամբ,

գ. ծածկերի փայտյա ֆերմաների հեղույսների ձգում,

դ. երկաթբետոնե կոնստրուկցիաների (ֆերմաներ, հեծաններ, ծածկասալեր) մերկացած ամրանների պաշտպանիչ շերտերի վերականգնում,

ե. ապակեպատ ձեռնաելուստների շրջանակների բացման և փակման սարքավորումների նորոգում, փոխում, փոխարինում,

զ. փայտյա կոնստրուկցիաների հակասեպտիկ և հակահրդեհային ծածկապատումներ,

է. ձեղնահարկային լուսամուտների նորոգում,

ը. կտուր տանող ելքերի վերականգնում կամ նորոգում,

թ. մետաղյա կտուրների սանդերքների ու թիթեղաթերթերի եզրերի ամրացում՝ դրանց զագաթների ու տակամասերի ծածկմամբ,

ժ. կտուրների մասնակի (կտուրի ընդհանուր մակերեսի մինչև 30 տոկոսը) փոխում,

ժա. մետաղյա ծածկերի առանձին մասերի նորոգում (ընդհանուր մակերեսից մինչև 30 տոկոսը փոխելով նորով),

ժբ. կղմինդրե և այլ հատասալիկներից հավաքվող ծածկերի նորոգում՝ առանձին կղմինդրների ու սալիկների փոխմամբ,

ժգ. գլանափաթեթավոր նյութերից ծածկի (փափուկ կտուր) մասնակի նորոգում,

ժդ. նավդանների, ջրհորդանների, ջրաթափերի, ջրընդունիչ ձագարների, քիվերի և այլ ելուստների նորոգում, փոխարինում, առանձին վնասված մասերի ամրացում,

ժե. ծխնելույզների, ծխաօդափոխիչ բլոկների և կտուրներից վեր բարձրացող այլ մասերի թիթեղապատվածքի նորոգում կամ փոխում, ինչպես նաև ծխաօդափոխիչ հորանների և կոյուղային կանգնակների գլխանոցների նորոգում,

ժզ. ձեղնասանդուղքների նորոգում և վերականգնում,

ժէ. թիթեղյա կտուրների պարբերաբար ներկապատում,

ժը. գլանափաթեթավոր նյութերից ծածկերի (փափուկ կտուրների) նավթաբիտումային մածուկապատում,

ժթ. ներքին ջրատարների ձագարափոսերի և վրադիրների նորոգում,

ի. տանիքների փոխում (նորացում)՝ առանց կոնստրուկտիվ փոփոխությունների,

իա. մետաղյա թերթերի ամբողջական փոխարինում կամ կղմինդրե ծածկի ամբողջական փոխարինում՝ պահպանելով տանիքի երկրաչափական չափերը.

5. միջհարկային ծածկեր և հատակներ՝

ա. ծածկի երկաթբետոնե կոնստրուկցիաների (հեծաններ, հենագերաններ, սալեր) պաշտպանիչ շերտի վերականգնում,

բ. ցրտահարման ենթակա մետաղյա հեծանների լրացուցիչ ջերմամեկուսացում,

գ. ցեմենտային, բետոնե և ասֆալտապատ հատակների փոսերի լցում,

դ. հատակների ու դրանց հիմնատակերի նորոգում,

ե. հատակների ցեմենտապատում և ծածկույթի (մանրատախտակ, լինոլեում, գորգատիպ սինթետիկ փաթեթանյութեր, կերամիկական, մարմարե, ցեմենտե և այլ սալիկներ) տեղադրում, նորոգում, փոխում, փոխարինում,

զ. շրիշակների տեղադրում, ամրացում, փոխում, փոխարինում,

է. ձեղնահարկային ծածկերի լրացուցիչ ջերմամեկուսացում,

ը. կախովի առաստաղների տեղադրում, փոխում, փոխարինում.

6. լուսամուտներ, դռներ ու դարպասներ՝

ա. (*) արտաքին դռների և դարպասների նույն տեղում փոխում, փոխարինում, վերականգնում և վերանորոգում,

բ. դռների ու դարպասների ծռված փեղկերի ուղղում և դրանց ամրացում,

գ. փեղկերի ամրացում՝ դրանց առանձին մասերի փոփոխմամբ,

դ. ապակիների փոխում, փոխարինում,

ե. լուսամուտների, լուսամուտագոգերի և դռների շրջանակների ու պատերի միջև արանքների փակում,

զ. լուսամուտների և դռների վնասված պարագաների փոխում, նորերի տեղադրում,

է. ներքին դռների և լուսամուտագոգերի տեղադրում, փոխում, փոխարինում և ներկում,

ը. մուտքի դռների և դարպասների ջերմամեկուսացում,

թ. արտաքին դռների զսպանակների և զսպիչների տեղադրում,

ժ. (*) արտաքին լուսամուտների փոխում, փոխարինում, արտաքին պատերի բացվածքներում ցուցափեղկերի փոփոխություն,

ժա. (*) պատշգամբների բազրիքների արտաքին տեսքի ձևափոխում՝ առանց կոնստրուկտիվ փոփոխությունների.

7. սանդուղքներ և սանդղամուտքեր՝

ա. բետոնե և քարե սանդուղքների, աստիճանների, թեքանների ու հարթակների խորշերի և փոսերի լցում,

բ. փայտաշեն սանդուղքների ու հարթակների առանձին մաշված տախտակների փոխարինում,

գ. սանդուղքաբաժնի բռնաձողերի և ճաղասարքերի ամրացում, առանձին մասերում բռնաձողերի և այլ մասերի փոխարինում,

դ. (*) թեքահարթակների իրականացում գոյություն ունեցող սանդղամուտքերում.

8. ճակատապատեր՝

ա. շենքերի ճակատների երեսապատման պոկվող ու թուլացած սալիկների, քարերի, ծեփածո և քարատաշ ճարտարապետական դետալների, բազրիքների, քիվերի և այլ մասերի ամրացում,

բ. (*) երեսապատումների նորոգում, փոխում, փոխարինում,

գ. շենքերի արտաքին սվաղի առանձին մասերի նորոգում,

դ. **(*) շենքերի ճակատապատերի ներկում,**

ե. կայուն բաղադրությամբ ներկված կամ երեսապատված ճակատապատերի մաքրում, լվացում՝ փոշուց ու մրից,

զ. **(*) քիվերի և այլ դեկորատիվ էլեմենտների վերականգնում,**

է. **(*) ծեփածո էլեմենտների վերականգնում,**

ը. ճակատապատերի մաքրում.

9. ջեռուցում՝

ա. ջեռուցման սարքերի տեղադրում,

բ. ջեռուցման խողովակաշարերի և սարքերի լվացում ու կարգավորում,

գ. ջեռուցիչ սարքերի և խողովակաշարերի առանձին հատվածների անսարքությունների նորոգում,

դ. ընդարձակիչ բաքերի ջերմամեկուսացում,

ե. խողովակաշարերի և սարքերի ներկում,

զ. վառարանների մանր նորոգումներ՝ դրա սարքավորումների մասնակի փոխմամբ, փլվածքների հեռացում, վերականգնում և արտաքին հարդարում.

10. օդափոխություն՝

ա. նոր օդանցքների տեղադրում,

բ. օդատարների մասնակի փոխում,

գ. օդատարներում ներծծումների վերացում,

դ. օդափոխիչների, օդատարների, կալորիֆերների, էլեկտրաշարժիչների, հենասարքերի, հորանների և այլ սարքերի նորոգում, փոխում,

ե. օդատարների և օդափոխիչ սարքավորումների ներկում,

զ. էլեկտրաշարժիչների նորոգում,

է. ծխնելույզների և ծխանցքների նորոգում, ներկում.

11. ջրամատակարարում և կոյուղի՝

ա. ջրաչափիչ սարքերի տեղադրում,

բ. ջրատար և կոյուղու խողովակների ու սարքերի հոսքերի և կաթոցների վերացում,

գ. ջրատար և կոյուղու խողովակաշարերի ամրացում և մասնակի նորոգում,

դ. ցրտահարվող մասերում խողովակաշարերի ջերմամեկուսացում,

ե. կոյուղու խողովակների և սարքերի մաքրում,

զ. խողովակաշարերի հատվածների նորոգում,

է. սանհանգույցների կահավորանքի տեղադրում, առանձին սարքերի (զուգարանակոնքեր, լվացարաններ, ծորակներ և այլն) փոխում, փոխարինում.

12. տաք ջրամատակարարում՝

ա. ջերմափոխանակիչների և գալարախողովակների մաքրում նստվածքներից ու աղտոտումից,

բ. պոմպային և մոտորային կայանների մանր նորոգում,

գ. ջրածորակների փոխում, խողովակաշարերի ջերմամեկուսացում և այլ փոքրածավալ աշխատանքների կատարում «Ջեռուցում» ու «Ջրամատակարարում և կոյուղի» բաժիններում թվարկված աշխատանքներին համապատասխան,

դ. խողովակաշարերի մասերի փոխում.

13. էլեկտրալուսավորում և կապ՝

ա. էլեկտրագծերի ցանցի վարդակների, սարքերի և սարքավորումների տեղադրում,

բ. հեռուստակապի և հեռահաղորդակցության ներքին համակարգերի տեղադրում,

գ. ծխահրդեհային տեղեկացման ավտոնոմ սարքերի տեղադրում,

դ. ներքին կախված էլեկտրալարերի ձգում և լրացուցիչ ամրակապերի տեղադրում՝ տեղակայված պիտույքակազմերի փոխարինմամբ (անջատիչներ, կոթառներ, վարդակներ),

ե. էլեկտրահաղորդալարերի առանձին հատվածների և էլեկտրասարքերի փոխում,

զ. պատերի, միջնորմների, միջհարկային ծածկերի նորոգման ժամանակ էլեկտրասնուցիչ ցանցի ապամոնտաժում և վերականգնում,

է. խմբային բաշխիչ և ապահովիչ վահանակների մանր նորոգում:

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՈՒՄ) ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԵՆ՝

1. ջրմուղ-կոյուղու կառուցվածքների ցանցեր, խողովակաշարեր, ամրաններ՝

ա. առանձին լայնակների կարանախցում,

բ. պողպատյա խողովակների առանձին ծայրակցատեղերի եռակցում կամ զոդում,

գ. արտահոսքի վերացման նպատակով առանձին տեղերի խցանում՝ կցորդիչներ, խամութներ, բանդաժներ տեղադրելով, կամ առանձին խողովակների փոխարինում,

դ. առանձին խողովակների (մինչև մեկ կմ երկարությամբ) փոխում, փոխարինում (պահպանելով խողովակների տրամագիծը),

ե. խցակների լցում, հեղույսների ձգում և ձևավոր մասերի ու ամրանաձողերի առանձին խցակների փոխում,

զ. ձևավոր մասերի կցորդային միացումներում ու ամրանաձողերում միջադիրների և հեղույսների փոխում, փոխարինում,

է. ջրածորանների ամրակապերի նորոգում,

ը. ջրաբաշխիչ աշտարակների նորոգում.

2. ջրմուղ-կոյուղու կառուցվածքների հորեր՝

ա. հորերի պատերի առանձին ճեղքերի վերացում,

բ. առանձին ընկնող աղյուսների խցում,

գ. առանձին երթային բռնակների փոխում,

դ. աստիճանների նորոգում,

ե. վաքերի սվաղների նորոգում, վերականգնում,

զ. անցքերի նորոգում,

է. մտոցների քանդված մասերի նորոգում.

3. ջրաբաշխման և հիդրոտեխնիկական կառուցվածքների պատվարներ, ամբարտակներ, ջրընկեցքներ, ջրանցքներ.

ա. բետոնե ջրթողիչների և ամբարտակի ճեղքերի վերալցում,

բ. ափեր ամրացնող ծածկույթի և շեղությունների ամրանների վնասվածքների վերացում (ընդհանուր մակերեսի մինչև 2 տոկոսի չափով),

գ. փայտյա կոնստրուկցիաների առանձին էլեմենտների փոխում,

դ. մետաղյա կոնստրուկցիաների հիմքային մասերի ամրացում և դրանց ներկում,

ե. երկաթբետոնե կոնստրուկցիաների վերջրյա մասերի պաշտպանիչ շերտերի վերականգնում,

զ. հողե կառուցվածքների ողողված շեղությունների լցում.

4. ջրաբաշխման և հիդրոտեխնիկական կառուցվածքների ջրային հորատանցքեր՝

ա. վերին ջրընդունիչ բաքի մաշված մասերի փոխարինում,

բ. ջրամուղ և օդամուղ խողովակների հիմնանցքերի խորացում կամ փոքրացում,

գ. ջրամուղ և օդամուղ խողովակների փոխում.

5. ջրմուղ-կոյուղու մաքրման կառուցվածքներ՝

ա. սվաղի առանձին հատվածների վերանորոգում՝ ճեղքերի փոխմամբ և երկաթայնացմամբ (սվաղված ընդհանուր մակերեսի մինչև 30 տոկոսի սահմաններում),

բ. մանր ճեղքերի հարդարում,

գ. մտոցների և աստիճանների նորոգում ու ներկում,

դ. առանձին բռնակների օգտագործում,

ե. ֆիլտրերի փողրակների կողերի երկրաչափական ձևերի վերականգնում,

զ. օդատարների նորոգում,

է. առանձին տեղերում մեկուսացումների նորոգում,

ը. երկհարկ տիղմազտիչների փողրակների նորոգում, փողրակների առանձին մասերի փոխում,

թ. կենսաբանական զտիչների շարվածքի առանձին մասերի նորոգում,

ժ. մղանցքների և խցերի հիդրոմեկուսացման փոխում.

6. ջրմուղ-կոյուղու կառուցվածքների խողովակաշարեր և ամրանաձողեր՝

ա. առանձին խողովակների ծայրակցատեղերի եռակցում կամ զոդում,

բ. առանձին խողովակների փոխում,

գ. խողովակաշարերի ջերմամեկուսացման և ջրամեկուսացման նորոգում, վերականգնում, փոխում,

դ. խցակների լցում, ամրանաձողի առանձին մասերի փոխում, հեղույսների ձգում,

ե. կցամիացումների հեղույսների և ներդիրների փոխում,

զ. ձևավոր մասերի, փականների, խտացուցիչների նորոգում, փոխում,

է. շարժական և անշարժ հենարանների փոխում.

7. գազափոխադրում և գազամատակարարում.

այս ենթակետով սահմանված գազափոխադրման և գազամատակարարման աշխատանքներն իրականացվում են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝

Ծանոթանալ

ա. գազաֆիկացված բնակավայրերում շենքերի և շինությունների ներսում գոյություն ունեցող ցածր ճնշման բաշխիչ գազատարից մինչև գազասարքերը միացման շինարարական-մոնտաժային աշխատանքներ,

բ. գազատարների խողովակաշարերի տեղային վթարային վերանորոգման, վերականգնման շինարարական-մոնտաժային աշխատանքներ,

գ. գազատարների շարժական և անշարժ հենարանների վերանորոգում և վերականգնում,

դ. գազային սարքավորումների (արմատուրների) փականների նորոգում և փոխարինում,

ե. էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայանների նորոգում և փոխարինում.

8. երկաթուղիների (այդ թվում՝ մերձատար և ներգործարանային) հողային պաստառ՝

ա. թեքությունների մաքրում և բարեկարգում,

բ. դիտահորերի, կանալների, խրամառուների, վաքերի արագահոսների մաքրում և կարգավորում,

գ. ջրացամաքիչների մաքրում՝ գարնանային ջրհոսքերից հետո,

դ. չիմապատվածքների, սալարկների, ճեղանների մաքրում և մանր նորոգում,

ե. լիցքի ֆիլտրող մասի մաքրում և մանր շտկում,

զ. հողային պաստառի լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում մինչև քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթով (ՄՆ 449-72 «Յուցումներ երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների հողային պաստառների նախագծման») սահմանված չափերը,

է. հողային պաստառի վերականգնում՝ սարքերի, ողողատների, փլուզումների և ճահճուտների տեղերում.

9. երկաթուղիների (այդ թվում՝ մերձատար և ներգործարանային) վերին կառուցվածքներ՝

ա. նստվածքային, թեքված և շեղված տեղամասերի ուղղում,

բ. փայտակոճերի մտցնում գծերի տակ,

գ. ռելսերի ուղղում,

դ. ամրացումների փոխում,

ե. ռելսերի ծայրանքների կարգաբեկում,

զ. բացվածքների ձգում,

է. փայտակոճերի նորոգում,

ը. փայտակոճերի ցրում,

թ. բալաստային պրիզմաների կարգաբեկում,

ժ. գծային ամրակապերի մաքրում և յուղում,

ժա. առանձին փայտակոճերի փոխարինում,

ժբ. ճաքած ռելսերի փոխարինում,

ժգ. անցատեղերի առանձին էլեմենտների փոխարինում,

ժդ. ուղեցուցանիշների, ուղեփակոցների և կարճասյուների ներկում,

ժե. սլաքային անցատեղերի նորոգում՝ առանձին էլեմենտների փոխմամբ.

10. երկաթուղիների՝

այդ թվում՝ մերձատար և ներգործարանային) արհեստական կառուցվածքներ (կամուրջներ, թունելներ, խողովակներ)՝

ա. հեղույսների ձգում և փոխում,

բ. գլանանիվների կարգաբեկում,

գ. վնասված հատային էլեմենտների փոխում,

դ. հենարանների ճաքերի փակում,

ե. հենարանների արտաքին մասերի տորկրետացում կամ ցեմենտացում,

զ. առանձին պոկված կամ տեղաշարժված քարերի տեղերի ցեմենտում.

11. ավտոմոբիլային ճանապարհներ.

այս ենթակետով սահմանված՝ ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման ժամկետները, երթևեկությունը խոչընդոտելու կամ սահմանափակելու դեպքերում, համաձայնեցվում են ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և համապատասխան համայնքի ղեկավարի հետ

ա. նստվածքների ուղղում՝ հարթեցմամբ և պնդեցմամբ,

բ. թափվածքների մաքրում,

գ. շեպերի ուղղում, հարթեցում և ամրացում,

դ. խրամուղիների ու ջրատար կանալների մաքրում,

ե. կողային առուների մաքրում, ակոսահանում և ամրացում,

զ. կողնակների լայնացում ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սույն կետի 8-րդ ենթակետով նշված քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթով սահմանված չափերը, դրանց ուղղում, ամրացում և լրացում,

է. ջրահեռացման վաքերի մաքրում, նորոգում և լրացում,

ը. ճանապարհային ծածկի առանձին տեղերի հարթեցում, ճեղքերի փակում,

թ. առանձին եզրաքարերի ուղղում, մայթերի նորոգում,

ժ. ճանապարհային նշանների և անվտանգության տարրերի նորոգում, փոխարինում և լրացում,

ժա. ճանապարհային նշագծման իրականացում,

ժբ. հենապատերի նորոգում և ուժեղացում,

ժգ. ճանապարհային ծածկի առանձին սալերի ուղղում և փոխում,

ժդ. ճանապարհային ծածկի փոսային նորոգում, քայքայված հատվածների փոխարինում,

ժե. արհեստական կառուցվածքների մաքրում, նորոգում և փոխարինում՝ սույն կետի 10-րդ կետի «գ»-«զ» պարբերություններով սահմանված ծավալներով,

ժզ. հողային պաստառի լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սույն կետի 8-րդ կետով նշված քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթով սահմանված չափերը.

12. Էլեկտրական ցանցեր և կապ՝

ա. կախված հաղորդալարերի վերաձգում,

բ. հաղորդալարերի կտրված տեղերի վերացում,

գ. առանձին մեկուսիչների փոխարինում,

դ. կողմնական ընձյուղների վրա լրացուցիչ ոլորքների տեղադրում,

ե. երկաթբետոնե և բետոնե կողմնական ընձյուղների ճաքերի և այլ վնասվածքների վերացում,

զ. առանձին հենասյուների ուղղում,

է. առանձին ընձյուղների ուղղում և փոխում:

ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բարեկարգման աշխատանքները ներառում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը, դեկորատիվ տարրերի տեղադրումը, այդ թվում՝

1. շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների կանաչապատում,
2. **(*) մայթերը և շենքերը շրջափակող սալահատակների փոխում, փոխարինում,**
3. **(*) մայթերի առանձին եզրաքարերի ուղղում, վերաշարում, փոխում, փոխարինում,**
4. **(*) մայթերն ու շենքերը շրջափակող տարածքների ասֆալտապատում և նորոգում՝ բացառելով հատակագծային նիշերի փոփոխությունները,**
5. **(*) ընդհանուր օգտագործման տարածքներում փոքր ճարտարապետական ձևերի և կառուցվածքների (ծածկարան, ճոճանակ, ցայտաղբյուր, խաղահրապարակ, նստարաններ, աղբարկղ և այլն) տեղադրում,**

6. սույն բաժնի 5-րդ կետով սահմանված փոքր ճարտարապետական ձևերի և կառուցվածքների նորոգում, առանձին մասերի փոխարինում,

7. **(*) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց և ճաղեր) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում,**

8. անհատական բնակելի տների փակ ներբակային տարածքների լրիվ բարեկարգում (կանաչապատում, ծառատնկում, մայթեր, ծառուղիներ, ծածկարան, ճոճանակ, խաղահրապարակ, նստարաններ և այլն),

9. գյուղական բնակավայրերում անհատական բնակելի տների ներբակային տարածքների քարե կամ սույն բաժնի 7-րդ կետով նշված կոնստրուկցիաներով ցանկապատում (ներառյալ դրա տարրերի փոխումն ու փոխարինումը), եթե ՀՀ օրենսդրությամբ կամ քաղաքաշինական փաստաթղթերով այլ բան սահմանված չէ,

10. **(*) շենքերի ճակատների փողոցահայաց հատվածներում դեկորատիվ տարրերի տեղադրում:**

II ԿԱՏԵԳՈՐԻԱ ՄԻՋԻՆ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ.

Այսպիսի օբյեկտների թվին են դասվում այն շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերի **փորձաքննությունը փոխարինվում է նախագծող կազմակերպության երաշխավորագրով**, իսկ շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական աշխատանքների **պատասխանատու կապալառուի երաշխավորագրով**՝ բացառությամբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով տեխնիկական հսկողության և շինարարության իրականացման լիցենզիա չպահանջող դեպքերի, մասնավորապես.

1. **300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող՝**

- ոչ ձեռնարկատիրական նպատակով (բացառությամբ պետական, համայնքային կամ բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացվող) կառուցվող անհատական բնակելի տները (առանձնատները, մենատները) և դրանց օժանդակ նշանակության կառույցները,
- բլոկավորված կառուցապատման բնակելի տները, որոնց յուրաքանչյուր բլոկն առանձնացված ելք ունի դեպի դուրս, իսկ բլոկների միջև ընդհանուր պատը բացվածքներ չունի հարևան բլոկի (բլոկների) հետ,
- առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքերն ու շինությունները՝ բացառությամբ վառելիքի լիցքավորման կայանների,
- հյուրանոցները, հյուրանոցատիպ հանգրվանները, մոթելները, զբոսաշրջային և ճամբարային բնակատեղիները, քեմփինգները,
- տարբեր տիպի գրասենյակները, կապի բաժանմունքները, արվեստանոցները,
- բաղնիքները, սաունաները,
- սույն ենթակետով սահմանված գործառնական օգտագործման սենքեր ներառող բազմաֆունկցիոնալ շենքերը,
- շենքերի և շինությունների արտաքին գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծումը.

2. գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտներից՝ ջերմոցները, դեզանոցները, չորանոցները, ինչպես նաև 1500 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող, սանիտարապահպանական գոտու կազմակերպում չպահանջող պահեստային շենքերը (բացառությամբ սննդամթերքի, քիմիական, պայթուցիկ, ճառագայթաակտիվ նյութերի, դեղորայքի, ինչպես նաև «Պահեստային շենքեր» ՀՀՇՆ IV-11.03.02-04 կիրառման ոլորտը չներառող այլ պահեստների)

Ծանոթանալ

3. մինչև 5 մետր բարձրություն ունեցող ոչ հիմնական օբյեկտները, ինչպես նաև թենիսի կորտերը, բասկետբոլի և վոլեյբոլի հրապարակները, այլ սպորտային նշանակության բացօթյա հարթային կառույցները (առանց տրիբունաների)՝ անկախ դրանց չափերից.

4. «1».-ից «3.» կետերում ներառված օբյեկտների վերակառուցման, կապիտալ նորոգման աշխատանքները, եթե դրանց արդյունքում չեն գերազանցվում միջին ռիսկայնության (II կատեգորիայի) օբյեկտի վերոնշյալ «1.»; «2.»; «3.» կետերով սահմանված հարաչափերն ու բնութագրերը:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն **Վերը թվարկված կետերով սահմանված դրույթները չեն տարածվում՝**

- ամբողջությամբ ստորգետնյա կառույց հանդիսացող ինժեներական, հիդրոտեխնիկական, պաշտպանական նշանակություն ունեցող ենթակառուցվածքի օբյեկտների կամ դրանց մասերի նախագծային փաստաթղթերի և շինարարական աշխատանքների վրա,
- ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ու երկաթուղագծերի, ինչպես նաև դրանց մաս հանդիսացող արհեստական կառույցների (թունելներ, կամուրջներ և այլն) վերակառուցման և (կամ) հիմնանորոգման նախագծային փաստաթղթերի և շինարարական աշխատանքների վրա:

III ԿԱՏԵԳՈՐԻԱ — ՄԻՋԻՆԻՑ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Այսպիսի օբյեկտների թվին են դասվում **II և IV կատեգորիաների** ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը **ենթակա են պարզ փորձաքննության**

IV ԿԱՏԵԳՈՐԻԱ — ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ.

Այսպիսի օբյեկտների թվին են դասվում հատուկ և կարևորագույն (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր) նշանակություն ունեցող շինարարական օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են **պետական համալիր փորձաքննության**՝ ներառյալ օրենքով սահմանված պետական լիազորված մարմինների փորձաքննությունները կամ մասնագիտական եզրակացությունները:

Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ նշանակության օբյեկտներն են՝

1. հատուկ նշանակության հողերում կառուցվող՝

ա. ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի, դրանց կազմավորումների և մարմինների, պաշտպանական, ռազմական ենթակառուցվածքի տարածքներում, այդ թվում՝ զինվորական բնակավայրերում՝ բնակելի, հասարակական, արտադրական, ինչպես նաև այլ նշանակության շենքերը և շինությունները,

բ. ՀՀ օրենսդրությամբ ամրագրված՝ սահմանային գոտում կառուցվող շենքերը և շինությունները, օրենքով պաշտպանվող շենքերը և շինությունները.

2. բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության համար կառուցվող անհրաժեշտ շենքերը և շինությունները.

3. պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները և դրանց պահպանական գոտիներում կառուցվող շենքերը և շինությունները.

4. ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 1008-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված շենքերն ու շինությունները (մասնավորապես՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող վարչական ու այլ նշանակության շենքեր ու շինություններ).

Ծանոթանալ

5. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի 1-ին կետով սահմանված օբյեկտները:

Ծանոթանալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՆ ԵՆ՝

1. հասարակական շենքեր և շինություններ՝

ա. հանրակրթական դպրոցներ (տարրական, միջին, հիմնական, ավագ, վարժարան և միջնակարգ դպրոց), հատուկ հանրակրթական դպրոցներ, արտադպրոցական կրթադաստիարակչական և նախադպրոցական ուսումնական հաստատություններ,

բ. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներ,

գ. պոլիկլինիկաներ, առողջության պահպանման կենտրոններ, ամբուլատորիաներ, հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիսներ,

դ. միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ,

ե. գիտական, գիտահետազոտական, նախագծային կազմակերպություններ, բանկեր, գրասենյակներ և այլ վարչական օբյեկտներ՝ 200 և ավելի աշխատատեղով,

զ. ռեստորաններ, սրճարաններ և հանրային սննդի այլ օբյեկտներ՝ 200 և ավելի տեղով,

է. հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ 200 և ավելի տեղով,

ը. մշակույթի կենտրոններ, թատրոններ, կրկեսներ, կինոթատրոններ, համերգասրահներ՝ դահլիճի 300 և ավելի նստատեղով,

թ. բենզալցակայաններ, գազալցակայաններ,

ժ. առևտրի կենտրոններ, հանրախանութներ և տոնավաճառներ՝ 1500 քառ. մետր և ավելի ընդհանուր մակերեսով,

ժա. զվարճությունների և հանգստի կազմակերպման կենտրոններ (հրաձգարաններ, բիլիարդի, բոուլինգի, սեղանի թենիսի և համանման խաղերի կազմակերպման համար նախատեսված օբյեկտներ) և խաղատներ՝ 100 և ավելի այցելուի համար,

ժբ. թանգարաններ, պատկերասրահներ, ցուցասրահներ՝ 1500 քառ. մետր և ավելի ընդհանուր մակերեսով,

ժգ. դատարաններ՝ 4 և ավելի դատավորներով,

ժդ. ունիվերսալ փակ մարզադահլիճներ՝ 1500 և ավելի նստատեղով, լողավազաններ՝ ավազանի ջրի հայելու 25.0 x 50.0 մետր և ավելի չափերով,

ժե. գրադարաններ, արխիվներ, ավանդապահոցներ՝ 1 մլն. և ավելի միավորով,

ժզ. ավտոկայաններ՝ 50000 և ավելի բնակիչ ունեցող քաղաքների համար,

ժէ. բազմահարկ վերգետնյա ավտոկանգառներ՝ 100 և ավելի ավտոմեքենայի համար, ստորգետնյա ավտոկանգառներ՝ 50 և ավելի ավտոմեքենայի համար,

ժը. դիվանագիտական ներկայացուցչություններ,

ժթ. երկաթուղային կայարաններ՝ 3 և ավելի կառամատույցներով,

ի. օդանավակայաններ,

իա. մետրոպոլիտեն,

իբ. հեռուստառադիոկենտրոններ, հեռուստաաշտարակներ,

իգ. քաղաքաշինական համալիրներ, որոնք իրենց կազմում ունեն սույն ցանկում ընդգրկված օբյեկտները.

2. քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթով (ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր») սահմանային հարկայնությունը (բարձրությունը) գերազանցող շենքեր, ինչպես նաև այդպիսի շենքեր ներառող քաղաքաշինական համալիրներ կամ թաղամասեր.

Ծանոթանալ

3. հասարակական, արդյունաբերական, ընդերքօգտագործման, գյուղատնտեսական և այլ արտադրական նշանակության, հիդրոտեխնիկական, կոմունալ, պահեստային, էներգետիկայի, կապի, ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներ՝

ա. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված օբյեկտները (մասնավորապես՝ նշված օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված փորձաքննության ընթացքում դիտարկվող, շրջակա միջավայրի օբյեկտներ),

Ծանոթանալ

բ. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1862-Ն որոշման N 2 հավելվածով /1/ և ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 31-ի N 957-Ն /2/ որոշմամբ սահմանված օբյեկտները (մասնավորապես՝ պետական հատուկ նշանակության հիդրոհանգույցներ և հիդրոտեխնիկական կառուցվածքներ),

Ծանոթանալ /1/ Ծանոթանալ /2/

գ. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված օբյեկտները (մասնավորապես՝ նշված օրենքի իմաստով արտադրական վտանգավոր օբյեկտ համարվող շենքեր ու շինություններ),

Ծանոթանալ

դ. ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N 1008-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված օբյեկտները (**մասնավորապես՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կարևորագույն նշանակության շինություններ ու կառույցներ**),

Ծանոթանալ

ե. «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի N 1 հավելվածով սահմանված օբյեկտները (**մասնավորապես՝ նշված կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով նախատեսված գործունեությանն առնչվող օբյեկտներ**),

Ծանոթանալ

զ. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի 1-ին կետով սահմանված օբյեկտները:

Ծանոթանալ

V ԿԱՏԵԳՈՐԻԱ	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ.

Այսպիսի օբյեկտների թվին են դասվում հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ նշանակության) օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են **հատուկ համալիր փորձաքննության** և որոնց կառուցապատման թույլտվությունների տրամադրման պայմանները և ժամկետները յուրաքանչյուր առանձին դեպքի համար սահմանվում են **ՀՀ կառավարության որոշմամբ**: